Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՄԱՐԻԱՆԱ ՍԱՐԳՍՅԱՆԻ ԵՎ ՕՖԵԼՅԱ ԶԱՔԱՐՅԱՆԻ Ք. ՀՌՈՄ (ԻՏԱԼԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ) ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Քաղաքացիական ծառայողի անունը, ազգանունը.

Մարիանա Սարգսյան, Օֆելյա Զաքարյան

2. Զբաղեցրած պաշտոնը.

Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի բարձրագույն կրթության և գիտության քաղաքականության վարչության միջազգային համագործակցության բաժնի պետ

Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի բարձրագույն կրթության և գիտության քաղաքականության վարչության միջազգային համագործակցության բաժնի գլխավոր մասնագետ

3. Գործուղման վայրը և ժամկետները.

Իտալիայի Հանրապետություն, ք. Հռոմ, 3-7 հունիսի, 2024 թվական

4. Հրավիրող կողմը.

Հռոմի եվրոպական համալսարան և Ակադեմիական շարժունության և համարժեքության տեղեկատվական կենտրոն

5. Գործուղման նպատակը (աշխատանքային որ խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).

Մասնակցություն 2024 թվականից Եվրոպական միության «Erasmus+» ծրագրի շրջանակում մեկնարկած «Micro-credentials for Higher Education Systems of Georgia and Armenia: South Caucasus Lighthouse Project (MICRO-GEAR)» նախագծի շրջանակում կազմակերպվող ուսուցողական այցին

6. Քննարկված թեմաները.

- Եվրոպական միության «Erasmus+» ծրագրի շրջանակում մեկնարկած «Micro-credentials for Higher Education Systems of Georgia and Armenia: South Caucasus Lighthouse Project (MICRO-GEAR)» նախագծի Work Package 1-ի շրջանակում իրականացվելիք աշխատանքները,

- միկրոորակավորումների իրավական հիմքերը Եվրոպական միությունում,
- միկրոորակավորումները Հարավային Կովկասում. առկա իրավիճակը և ճանապարհային քարտեզը,
- միկրոորակավորումների ոլորտում Իտալիայի փորձի ներկայացումը,
- միկրոորավորումների կիրառման առկա փորձի վերլուծություններ, մասնավորապես, Հռոմի եվրոպական համալսարանի փորձը,
- միկրոորակավորումները բարձրագույն ուսումնական հաստատություններում. հնարավորություններ և մարտահրավերներ,
- DiploMe թվային հարթակի գործարկումը և միկրոորակավորումների արդյունքում տրամադրվող թվային հավաստագրերը,
- միկրոորակավորումները Հռոմի եվրոպական համալսարանի ակադեմիական գործընթացում,
- որակի ապահովումը Micro-GEAR կուրսերում,
- մշակութային բանականության լաբորատորիաները:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Այցի ընթացքում Մ. Սարգսյանը և Օ. Զաքարյանը մասնակցել են Հռոմի եվրոպական համալսարանում կայացած նիստերին, որոնց ընթացքում ելույթներով հանդես են եկել Հռոմի եվրոպական համալսարանի ռեկտորի միջազգայնացման հարցերով ներկայացուցիչ Անիելլո Մերոնեն, Իտալիայի CIMEA-NARIC (Ակադեմիական շարժունության և համարժեքության տեղեկատվական կենտրոն) տնօրեն Քիարա Ֆինոչիետին, ԵՄ նախագծերի և նորարարության մենեջեր Անդրեյ Գիրենկոն և այլք:

Քննարկումներ են տեղի ունեցել միկրոորակավորումների վերաբերյալ Եվրոպական միությունում առկա իրավական հիմքերի (European Skills Agenda, Digital Education Action Plan 2021-2027, European Education Area, European Pillar of Social Rights Action Plan, European Approach to micro-credentials), նպատակների, սահմանումների, դրանց կիրառման մարտահրավերների վերաբերյալ:

ԵՄ նախագծերի և նորարարության մենեջեր Անդրեյ Գիրենկոն ներկայացրել է կրթության մեջ որակի ապահովման կարևությունը և վերջինիս հետ միկրոորակավորումների անմիջական առնչությունը:

Նիստերի ընթացքում ներկայացվել են DiploMe թվային հարթակի, մշակութային բանականության լաբորատորիաների և միկրոորակավորումների ոլորտում Հռոմի եվրոպական համալսարանի կարերիայի կենտրոնի կողմից իրականացվող աշխատանքները:

Իտալիայի Ակադեմիական շարժունության և համարժեքության տեղեկատվական կենտրոնում հանդիպում է տեղի ունեցել Եվրոպական միության «Erasmus+» ծրագրի շրջանակում մեկնարկած «Micro-credentials for Higher Education Systems of Georgia and Armenia: South Caucasus Lighthouse Project (MICRO-GEAR)» նախագծի կոնսորցիումի անդամների հետ և քննարկվել են այս նախագծի շրջանակում հետագա աշխատանքները և հանդիպումները:

8. Հանդիպումների ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Եվրոպական միության «Erasmus+» ծրագրի շրջանակում մեկնարկած «Micro-credentials for Higher Education Systems of Georgia and Armenia: South Caucasus Lighthouse Project (MICRO-GEAR)» նախագծում ընդգրկված մասնակիցները կշարունակեն իրականացնել WP1-ի շրջանակում նախատեսվող հետագա աշխատանքները և կմասնակցեն առաջիկայում անցկացվելիք հանդիպումներին, ինչպես նաև կշարունակեն միկրոորակավորումների ոլորտում միջազգային փորձի, բարձրագույն ուսումնական հաստատությունների համար հնարավորությունների և մարտահրավերների ուսումնասիրությունը և տեղեկատվության փոխանակումը:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Նիստի արդյունքում հստակեցվեցին Erasmus+ «Micro-credentials for Higher Education Systems of Georgia and Armenia: South Caucasus Lighthouse Project (MICRO-GEAR)» նախագծի WP1-ի շրջանակում նախատեսվող հանդիպումների գրաֆիկը և նախագծի կոնսորցիումում ներառված Հայաստանի և Վրաստանի ներկայացուցիչների վերապատրաստումների ժամանակացույցը:

12 հունիսի, 2024 թվական

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ
ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ

ՄԱՐԻԱՆԱ ՍԱՐԳՍՅԱՆ

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ
ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ
ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ԳԼԽԱՎՈՐ ՄԱՍՆԱԳԵՏ ՕՖԵԼՅԱ ԶԱՔԱՐՅԱՆ